

ՏԱՍՆԵՐԿՐՈՐԻ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի:  
Առանձին համարները 5 կոպեկով:  
Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մէջ:  
Օտարաբաղադրացիք դիմում են ուղղակի  
Тифлис. Редакция «Мшак»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(Բացի կիրակի և տօն օրերէն):  
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:  
Յայտարարութիւնների համար վճարում են  
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ:

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԴՐԱԿԱՆԱԿԱՆ „ՄՇԱԿ“

ԱՄԵՆՕՐԵԱՅ ԼՐԱԳԻՐ  
(ՏԱՍՆ ԵՒ ԵՐՐՈՐԻ ՏԱՐԻ)

ԱՌԱՋԻՆԿԱՅ 1884 ԹԻՒՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ՆՈՅՆ ԳԻՐԳՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄԱՅՈՎ

Պ Ր Օ Գ Ր Ա Մ Ա

I. ՏԵՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ: II. ԱՌԱՋՆՈՐԴՈՂ ԹՕԴՈՒՄՆԵՐ: III. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Ընդհանուր յօդուածներ, թղթակցութիւններ, լուրեր: IV. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Ընդհանուր յօդուածներ, թղթակցութիւններ, լուրեր: V. ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ: VI. ՀՆՈՒՍԳԻՐՆԵՐ: VII. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Ֆելետոն, վէպեր, ինքնուրոյն և թարգմանական յօդուածներ գիտութեան ամեն հիւղերից, թղթակցութիւններ: VIII. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ: ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ: Տարեկան 10 ռուբլի, վեց ամսվայ 6 ռուբլի, իւրաքանչիւր ամսվայ 1 ռուբլի: ՀԱՏՈՎ համարները 5 կոպեկ:  
ՀԱՍՑԵՆ. Тифлис, редакция «Мшак».

Խմբագիր—Հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր բարեգործական հիմնարկութիւնները և մեր բարեգործները:—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ Մեծ-Ղարաբլիսայից: Նամակ Ախալքալաքից: Ներքին լուրեր:—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Արտաքին լուրեր:—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ:—ՀՆՈՒՍԳԻՐՆԵՐ:—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՄԵՐ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՄԵՐ ԲԱՐԵԳՈՐԾՆԵՐԸ

Ազգերի կեանքում լինում են այնպիսի դարեշրջաններ, երբ համարեա ամբողջ ժողովրդի ուշադրութիւնը, ձգտումները լարված են լինում դէպի մի նպատակ: Հաբուստն իր արծաթը, աղբաւն իր աշխատանքը, գիտնականն իր հիմունքները դրոժ են դնում նոյն նպատակի իրադրոժովուն: Մէկի արածը միւսի համար օրինակ է դառնում և գործը ընդհանրանում է: Տեսնում ենք, այս ինչ ազգի մէջ, այս ինչ դարում ծաղկում է արհեստը, միւսի մէջ գիտութիւնը, երրորդի մէջ վաճառականութիւնը, մի այլ ազգ այդ ժամանակ զբաղված է պատերազմական պատրաստութիւններով, ամբացնում է իր երկրի սահմանները, բերքեր է կառուցանում, զինուորների թիւն է աւելացնում, բայց մի ուրիշ անշարժութեան մէջ է գտնվում և ոչինչ բանի վրա չէ մտածում:—Այդ բոլորը ամեն մի ժողովրդի մէջ, ժամանակի պայմանների և պահանջների համեմատ, ունեն իրանց բնական դրդիչ պատճառները: Նոյն պատճառներից զարթնում է մի ժողովրդի մէջ և բարեգործական ոգին:

Բարեգործութիւնը և բարիքի գաղափարը զանազան ժամանակներում զանազան տեսակ է հասկացել մարդկութիւնը: Ինչ որ մի քանի դար առաջ բարի էր, օգտակար էր, այսօր կարող է չար և վնասակար համարվել, որի ընդհակառակն, ինչ որ մի քանի դար առաջ վնասակար էր համար-

վում, այսօր բարիքը նրա մէջն են գտնում: Բարեգործութիւնը իր տեսակետներով նոյն պէս ժամանակի ծնունդ է և կրում է իր վրա իր դարի գրոշմը: Այդ է պատճառը, որ մի և նոյն ժամանակում արտայայտված, նոյնատեսակ բարեգործական հիմնարկութիւններ ընդհանրանում են ժողովրդի մէջ և բոլորը ձգտում են նրանց նպատակը:

Մեր ազգի կեանքի մէջ ևս եղել են այնպիսի դարեշրջաններ, երբ ժողովրդի բարեգործութեան առարկան եղել են մի և նոյն հիմնարկութիւնները: Տեսնում ենք մի և նոյն դարում, համարեա մի և նոյն ժամանակի նպատակներում կառուցվել են բազմաթիւ վանքեր և եկեղեցիներ: Միայն մի քաղաք ունէինք, որը ունէր հազար և մի եկեղեցի, վերջին մէկը, ըստ աւանդութեան, շինել էր տուել մի հովիւ: Մեր թագաւորները, իշխանները և մեծատունները ահազին ծախքեր էին անում վանքեր կառուցանելու, և ապաքայում նրանց նորոգութիւնների և միաբնակութեան պահպանութեան համար ոմանք սեպակաւանացնում էին գիւղեր, ագարակներ և զանազան անշարժ կալուածքներ: Այդ բոլորը համարվում էր բարեգործութիւն: Տեսնում ենք, մի և նոյն դարում, համարեա մի և նոյն ժամանակ կառուցվել են զանազան մեծ և փոքր գետերի վրա բազմաթիւ կամուրջներ: Շինողները նոյնպէս ապահովացրել են կամուրջների զոյւթիւնը, թողնելով նրանց ապագայ նորոգութիւնների համար անշարժ կալուածքների եկամուտներ: Այդ նոյնպէս բարեգործութիւն էր համարվում: Սոյնպիսի բարեգործական նպատակներով մեր իշխաններից շատերը հարթել են ճանապարհներ, և լեռնային բարձրաւանդակների վրա, բնակութիւնից մեկուսացած տեղերում, կառուցանել են քաղաքներ և բուքից պատսպարելու համար, շինել են իջևաններ, պանդոկներ: Բարեգործութիւն էր համարվում և անապատ տեղերում աղբիւններ անցկացնելը, որ ճանապարհորդները ջուր գտնեն խմելու: Բարեգործութիւն էր համարվում

և ջրանցքներ բաց անելը, որ դիւրացնեն երկրագործութիւնը: Ամեն մի ջրանցքի, ամեն մի աղբիւրի հետ պահպանվել է բացանողի անունը, և իւրաքանչիւր վայելող սրբազան պարտք է համարում „ողորմի“ անել հիմնողի հոգուն:

Երբ մի հասարակութիւն այնքան զարգացած է, որ համայնական ուժերով հոգայ ընդհանուր պէտքերը, այդ դէպքում մասնաւոր բարեգործների արածը ունի իր օգտակար նշանակութիւնը:

Բայց որովհետեւ բարեգործութիւնն ևս ունի իր հրապուրիչ կողմերը, այդ պատճառով բարեգործներն ունենում են շատ հետեւողներ: Սրինակ, մէկը մի վանք է շինում, ժողովուրդը շնորհակալ է լինում նրանից, օրհնում է և յարգում է նրան: Այդ փառքը զրգուում է և միւսների բարի նախանձը, և սկսում են բոլորը վանքեր շինել:

Այդ բոլորը շատ լաւ է, բայց ունի և իր վնասակար կողմերը: Երբ մի բարեգործ, միւսին հետեւելով, անում է այն, ինչ որ միւսն է արել, այսպիսով մի և նոյն հիմնարկութիւնները այնքան բազմանում են, որ հասարակութեան պահանջի հետ համեմատելով, ոչ միայն աւելորդ են դառնում, այլ նրանց պահպանութիւնը մի ծանր բեռն է լինում հասարակութեան վրա: Մի ժամանակ վանքերն ու եկեղեցիները այնքան բազմացան, որ եթէ հասարակութիւնը իր բոլոր միջոցները գործ դնէր, հազիւ թէ կարող էր պահպանել նրանց զոյւթիւնը: Եւ բարեգործութեան այդ արդիւնքները աւելացրին Անդրկովկասի աւերակների թիւը:

Միւս վնասակար կողմն այն է, որ երբ մի ժողովրդի բարեգործական ներուժները ուղղված են լինում դէպի մի և նոյն հիմնարկութիւնները, այդ դէպքում հասարակութեան պէտքերի միւս ֆակտորները, որոնք նոյնքան և զուգէ աւելի անհրաժեշտ են, մնում են անգործադրելի և բոլորովին զանցառութեան են տրվում: Ի՞նչ կը լինէր, եթէ բոլորը եկեղեցիներ կառուցանէին և դպրոցի վրա ոչ ոք ուշադրութիւն չէր դարձնէր:

Մեր ժամանակում բարեգործները և բարեգործական հիմնարկութիւնները սկսեցին ուշադրութիւն դարձնել դպրոցների և ուսման վրա: Հարուստները մեռնելու ժամանակ իրանց հարստութիւնից մի մասն են հանում դպրոցների համար: Ոմանք առանձին դպրոցներ են կառուցանում: Ոմանք իրանց ծախքով որդեգիրներ են պահում թէ պատեղ և թէ արտասահմանում: Ամեն ոք ցանկանում է, որ ամենայնպէս գիւղացին անգամ գրել-կարդալ գիտենայ, ամեն ոք ցանկանում է իր լուսնի ձգել ժողովրդի կրթութեան զանախանի մէջ:—Այդ բոլորը շատ զեղեցիկ է, շատ օգտակար է, բայց մի թէ ժողովրդի յառաջդիմութիւնը միայն դպրոցներից պէտք է սպասել: Ի՞նչով է զանազանվում այժմեան բարեգործութիւնը այն ժամանակների բարեգործութիւնից, երբ բոլորը վանքեր կամ կամուրջներ էին հիմնում:

Ինչպէս վանքերի թիւը բազմացնելով, մենք ստացանք բազմաթիւ արեղաններ, որ չը գիտէինք, թէ ինչպէս կերակրենք նրանց, այնպէս էլ միմիայն դպրոցների թիւը բազմացնելով, մենք շուտով կը ստանանք մի ուսումնական պրօլետարիատ, որ չենք իմանայ որտեղից հաց ձարենք նրանց համար:

Երբ ժողովրդի կրթութեան ֆակտորները մէկը միայն զարգանում է, կրթութեան ջանքերը դառնում են միակողմանի: Ժողովրդի կրթութեան բոլոր ֆակտորները պէտք է ներդաշնակաբար և հաւասար կերպով զարգանան և պէտք է ներդաշնակաբար գործեն, որպէս գործիչները մի որ և իցէ մեխանիզմի մէջ և որպէս կենդանի մարմին մէջ նրա բոլոր գործարանները: Գործարաններից մէկի չափազանց զարգանալը կը թուլացնէ միւսների գործողութիւնը, և առողջութիւնն ու կեանքը կը դադարի:

Մասնաւորները մեր խօսքը: Այժմ թէ մեր բարեգործական հիմնարկութիւնները և թէ մեր մասնաւոր բարեգործները, բոլորը իրանց խելքն ու միտքը տուել են դպրոցական գործին, բոլորը նպաստում են դպրոցների բարեկարգութեանը և ուսումնական անձանց թիւը աւելացնելուն: Մեր կրթութեան միւս անհրաժեշտութիւնները կամ բոլորովին առնուադիր են թողված, կամ խիստ անախանձելի դրութեան մէջ են:

Մեր յօդուածի նպատակից դուրս է մի առ մի մասնացոյց անել այն բոլոր պայմանների վրա, որոնք անհրաժեշտ են մի ժողովրդի կրթութեան համար:—Բայց որովհետեւ մեր խօսքը բարեգործական օժանդակութիւնների մասին է, ուստի աւելորդ չենք համարում մասնաւորապէս ցոյց տալ, թէ մեր բարեգործները ուրիշ ի՞նչ բանի վրա կարող էին ծախել իրանց արծաթը:

Ահա հասարակութեան մէջ յայտնվել է մի երկտասարդ տաղանդ. նա նկարիչ է, նրա նկարները մենք ամեն օր տեսնում ենք փողոցի վրա դրած և հիանում ենք: Նրիտասարդը ցանկանում է զնալ արտասահման և աւելի կատարելագործել իր արհեստը: Բայց նա աղքատ է, միջոցներ չունի: Մեր բարեգործներից ոչ ոք նրան նպաստելու համար ուշադրութիւն չէ դարձնում, չը նայելով, որ մի ժողովրդի մէջ կարելի է հարեւաւոր ֆիզիկոսներ, քիմիկոսներ և այլ մասնագէտներ պատրաստել, բայց դարերի ընթացքում հազիւ թէ ծնվում են մի կամ երկու լաւ նկարիչներ: Մեր խօսքը պ. Բաշինջաղեանի մասին է: Այդ երկտասարդը գուցէ մի օր Այվազովսկու արժանաւոր յաջորդը կը լինի, բայց ոչ ոք միջոց չէ տալիս նրան իր ձիւքերը զարգացնելու և իր արհեստը կատարելագործելու:

Մի ուրիշի մէջ երևում են մուշկիպի ձիւքեր, նա կամ ածում է և կամ նուազազիր (կոմպոզիտոր) է: Մանուկ տաղանդը դեռ կարօտ է կատարելագործութեան: Բայց ո՞վ է մտածում նրա վրա: Այսպիսիները իրանց թարմ ուժերը նուիրում են



ըրկավի, բաղադրային իշխանությունները, դասճիտամտադատութեամբ, պատժի նախընթաց օրը բանտում պահեցին նրան: Ասում են, որ Օդոննէլ չը լիտելը, թէ իր բարեկամները աշխատում են փրկել նրան: Նա հանգիստ կերպով լսեց մահուան դատաւճիռը և համաձայնեց ընդունել կաթոլիկ քահանային: Նրա կինը և եղբայրները այցելեցին իրան բանտում: Մինչև պատժի օրը Օդոննէլ շատ առողջ էր, բա. ակտիվ էր ունէր և մինչև անգամ արժապէս էր: Նախընթաց օրը նա վաղ պատկեց հանգու: Հետեւեալ օրվայ առաւօտը մտայլ էր: Եթէ իկտ ժամին պատժի տեղը սկսեց ամբողջ հաւաքել: Օդոննէլ գնում էր հաստատ լայնելով: Նրա հէմքը ցամաքած էր երկում դատաստանի օրը, լայն նա շատ հանդիստ էր: Նրա դուռն դալուց առաջ եկեղեցում սկսեցին կամայ զանգահարել, որը մտայլ հանդիսի տպաւորութիւնը աւելի ևս ընծայեցում էր: Օդոննէլ հաստատ լայնելով բարեկարգաւ էշաֆօտի վրա: Մահուան լուսէին ամենափոքր յուզումը անգամ նկատելի չէր նրա մէջ: Մահը մի անխնայութեամբ եղաւ: Բանտի կողմերի վրա իսկոյն ծածանեցեալ ան դրօշակը և զանգահարութիւնը դադարեցաւ: Պատժից մէկ ժամ յետոյ մարմինը իջեցրին էշաֆօտից և կտրուեցին: Ասում են, որ մահից առաջ Օդոննէլ ասեց միայն, թէ ինքն ցաւում է, որ դատարանում, մահուան դատաւճիռը կարողացաւ յետոյ մի քանի կողմի տեսքերի ասեց: Զանգահարի եղբայրը կանգնած էր բանտի դռների մօտ: Նա ինչպե՞ս տեսնել իր եղբոր դիակը, բայց մերժեցին նրա ինչպիսիք: Օդոննէլի կինը Լիվերպուլի միջով ճանապարհ ընկաւ դէպի Ամբերիա, ուր նրա մայրն էլ իր օգնականներուց ետք թաքնուեցին:

**ՎԵՐԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ**  
ՀԻՒՄՍԱՅԻՆ ԳՐՈՒԿԱՎԱՌՈՒԹԻՒՆՅՈՒՆ  
ՕՍՍԿ, 27 դեկտեմբերի: Գեկտեմբերի 25-ին անցան Օմսկից լէյտենանտ Գարեթը և Շիւտց կապիտան Դէյօնդի և նրա 9 ուղեկիցները նշխարների հետ: Աշխարհագրական ընկերութեան պատեղի բաժնի պատգամաւորութիւնը Գարեթին և Շիւտցին համակրական ուղերձ յանձնեց:

ԺՈՒՆԻ, 27 դեկտեմբերի: Լուսերի համեմատ ռուսաց արտաքին գործերի մինիստրը այս շաբաթ Մոսկովից Գաղղիում են, որ Անամի կառավարութիւնը պաշտօնապէս յայտնեց իր համաձայնութիւնը ճանաչել ռուսոսի 12-ի դաշնագիրը: Այսօր Անամի թագաւորը հանդիսով կրեղունի Տրեկուին:

ԿԱՅԻՐԷ, 27 դեկտեմբերի: Եգիպտական կառավարութիւնը մերժում է անգլիական ընթերցանական, որի պահանջների համեմատ Սուլթանը նուաճելու համար արշաւանքի ծախսերը պէտք է ընկնեն Թիւրքիայի վրա և եգիպտական սահմանները պէտք է յետ քաշվեն մինչև Նիղոս գետի երկրորդ ջրվեժը: Սպասում են, որ Շէրիֆ փաշայի մինիստրութեանը կը փոխարինէ լէյտէնանտ մինիստրութիւնը: Լուսերը լսեղիվի դիտաւորութեան մասին հրաժարվել եգիպտական դահլիճ սխալ են:

ՆԻՒԻՐՈՒ, 27 դեկտեմբերի: Բելլիլի մէջ Վիկտորիա նահանգում այրվեցաւ կանանց լանջը: Հրդեհի ժամանակ կորան 12 անակերտահեք և 5 կոյսեր:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 դեկտեմբերի: Պետական բանկի 5% տոմսերը առաջին շրջանին արժէ 95 ռ. 75 կ., երկրորդ 94 ռ., երրորդ 94 ռ. 37 կ., չորրորդ 94 ռ. 37 կ., հինգերորդ 94 ռ. 50 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսերը արժէ 221 ռ. 50 կ., երկրորդ 210 ռ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսերը արժէ 91 ռ. 50 կ., երկրորդ 91 ռ. 62 կ., երրորդ 92 ռ., ոսկի 8 ռ. 44 կ.: Ռուսաց ի բոլոր 1 լուրդին վրա արժէ 23<sup>9</sup>/<sub>16</sub> պէնոյ, առաջին 100 ռուբլ. Համբուրգի վրա արժէ 199<sup>1</sup>/<sub>2</sub> մարկ, Գաղղիի վրա 246<sup>1</sup>/<sub>2</sub> ֆրանկ: Եւրոպայի տրամադրութիւնը ամուր է:

ԽՈՐԱԿԻՐ-ՀԱՄԱԿԱՐԱԿՈՂ ԳԻՐԳՐՈՒ ԱՐԾՈՒՆԵՐ

